ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023 թ.

«Ազատություն» ռադիոկայանի լրագրող
Կարինե Սիմոնյանին
simonyank@rferl.org

Ձեր 21.08.2023թ. գրությանը.

Հարգելի տիկին Սիմոնյան

Տեղեկացնում եմ, ՀՀ կառավարության 2021-2026թթ.-ի ծրագրով ամրագրված 300 դպրոցի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի օժանդակությամբ մեկնարկել է ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերում կրթահամալիրների ստեղծման ծրագիրը (ծրագիրը դեռևս նախագծային փուլում է): ՀՀ Լոռու մարզում ընտրվել է թվով 32 բնակավայր, որոնցից 11-ում կձևավորվեն կրթահամալիրներ, 11-ի համար կկառուցվեն նոր դպրոցների շենքեր, 2-ում կկառուցվեն միայն մարզադահլիճների և հանդիսությունների դահլիճների մասնաշենքերը, իսկ ուսումնական մասնաշենքերը կդիտարկվեն վերանորոգման համար, 4-ի մասով անհրաժեշտ է լրացուցիչ դիտարկում (Ագարակի և Վարդաբլուրի դպրոցներն են, որոնք պահանջում են անհատական նախագծեր, Հաղպատ և Լեռնապատ, որոնք դեռ պետք է դիտարկվեն քաղշինի կողմից) և 2-ի մասով անհրաժեշտ կլինի հետագայում իրականացնել միայն ընթացիկ նորոգման աշխատանքներ (Արևաշող և Վահագնի): 2 կլաստերի մասով էլ անհրաժեշտ չէ կատարել հատկացումներ, քանի որ դրանց շենքերը արդեն կառուցվել կամ կառուցվում են:

Այսպիսով, նախագծով նախատեսվում է գումար հատկացնել ընդհանուր թվով 42 հաստատության՝ 15 կրթահամալիրի ստեղծման, 20 դպրոցի և 7 մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքերի կառուցման համար անհրաժեշտ

կատ. Ա.Գրիգորյան
հեռ. /0322/ 2-32-99

նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:

Քանի որ գործընթացը նախագծային փուլում է՝ դեռևս վերջնակարորեն հստակեցված չեն թե արդունքում որ դպրոցները կփակվեն:

ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 35 դպրոցներ ունեն 50-ից պակաս թվով աշակերտներ:

23/08/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա.Գրիգորյան
հեռ. /0322/ 2-32-99